



Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՔ ԱԶԳԱՅԻՆ ՊԱՏՐԻԱՐՔԱՐԱՆԻ

ԱՏԵՆԱԳՐՈՒԹԻՒՆՔ

ԱԶԳԱՅԻՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎՈՅ

ԲԱՅՈՒՄ 1870 ԱՄԻՆ

ՆԻՍ ՅԻՍՍՈՒՆԵՐՐՈՐԴ

25 ՕԳՈՍՏՈՍ 1872



ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ Ը. Յ. ՄԻՐՔՅԱՆ

— 1872 —

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎ

ԲՍՅՈՒՄ 1870 ԱՄԻՆ

ՆԻՍՏ Ծ.

25 ՕԳՈՍՏՈՍ 1872

ՆԱԽԱԳԱՀ. — ՍՐԲԱԶԱՆ ՊԱՏՐԻԱՐԲ

ԱՏԵՆԱՊԵՏ. — ՏԱՏԵԱՆ Յ. ԷՖ. (Բ. Ատենապետ)

ԿԱՐԳ ԽՆԴՐՈՅ

- 1° Հրաժարումն Քաղաքական ժողովոյ և անդամոց :
- 2° Վաւերացումն նորընտիր երեսփոխանաց :
- 3° Կոնգակ Վեհ. Կաթողիկոսի :
- 4° Ատենական Կանոնագրութիւն :
- 5° Կաթողիկոսական եւ Պատրիարքական յարաբերութիւնք :
- 6° Հարցումն ինն երեսփոխանաց :

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Պատկառելի ժողովոյդ ատենանը չը բացած՝ կրկնակի պարտք մ'ունիմ կատարելու. Ամենէն առաջ իմ երախտագիտութիւնըս կ'յայտնեմ ընտրողացս եւ պաշտօնակիցներուս վասն այն բարձր վստահութեան՝ որով զիս հանձնցան պատուել այսպիսի փափուկ եւ կարեւոր պաշտօն մը ինձ յանձնելով :

Միանգամայն այսօրուան ազգային գործոց մասնակցութիւնս դրեթէ առաջինն ըլլալուն, կը համարձակիմ իմ անձնական կարծիքս կարճ ի կարճոյ ժողովին ներողամիտ ուշադրութեանը ենթարկել :

Տեա՛րք, մեր նուիրական պաշտօնին կարեւորութիւնն ու նպատակը կարօտ չեն բացատրութեան. Ամենքնիս նոյն անկեղծ փափաքն ունինք, այն է մեր սիրելի Ազգին երջանկութիւնը եւ յառաջագիւծութիւնը հաստատել :

Այսպիսի վեհ ըզձի մը լրու՛մը թէ եւ դժուար

կերելի պարագայից նկատմամբ, բայց անկարելի ալ չէ, Կրնանք դժուարութեանց յաղթել քաղաքական խոհեմութեամբ, օրինաւոր ընթացքով, իրաց գործնական ոգւով եւ մանաւանդ ազգասէր եւ անկողմնակալ միութեամբ : Թո՛ղ հետի ըլլան մենէ այն անձնականութիւնները՝ որ ընդհամայն աշխարհ ազգային ժողովներու մէջ երկպառակութեան եւ հետեւաբար ազգաւէր աղէտից պատճառ են եղած, քանզի փորձն ապացուցեր է որ անձնական խնդիրներու վախճանը՝ կողմնակցութեան հետ տի բացազանչութիւններու եւ ամուլ յուզմանց կայանք է տուեր :

Ասի ամենուս յայտնի է. ամենքնիս ալ պատմութեան մէջ տեսեր ենք ասոր ապացոյցը :

Կայսերական կառավարութեան մեր Ազգին վրայ ունեցած վաղեմի բարեացակամութեամբը շնորհած արտօնութիւններուն պտուղը վա-

յնել տանք Ազգին իրարու հետ կատարեալ միութեամբ, անանկ որ տէրութեան վստահութիւնը որ քան զոր մեր վրայ ածեցընենք, մեր տառապեալ ազգայնոց՝ որք հոետորներու ճոռումբանութեանց չեն սպասեր, այլ վիճակնուն բարելաւութեանը, մեր ազգայնոց կրօնսեմ, փայլուն ապագայ մը պատրաստենք Սահմանադրութեան գործադրութեամբը, եւ միւս արեւելեան ազգերուն ըսել տանք որ « ժրջան Հայր պէտք է մեզ օրինակ բռնել »:

Տեա՛րք իմ, այս ըսածներս, քաւ լիցի՛, յորդոր մը տալու մտքով չեն, քանզի ես Ձեր փորձառութեանն ու առաջնորդութեանը կարօտ եմ: Նպատակս միայն կարծիքս յայտնել եւ այս պաշտօնիս մէջ այսպիսի ընթացք մը բռնելու գիտաւորութիւն ունենալս այժմէն ակնբերեւ ջուցընել է:

Ատենապետ էֆէնտին այս ատենախօսութիւնն ընելէ ետեւ՝ ատենանը բացաւ ժամ 8 ին. մինչդեռ 46 երեսփոխանք ներկայ էին, եւ ժողովն տակաւին իւր մեծագոյն մասն ունենալու համար ութն թիւի կը կարօտէր, սակայն ընդ հուպ այս պակասը լրացաւ, երեսփոխանաց ներկայութեան ամբողջ թիւը ի վերջէ 48 ի յանդելով:

Ատենադպիր էֆէնտին անձնական տկարութեան պատճառաւ բացակայ գտնուելու հարկադրեալ քանի մը երեսփոխանաց անուններն ծանուցանելէ ետեւ՝ ընթերցաւ նաեւ երեք երեսփոխանաց, Խ. Ոսկանեան, Գ. Մկրտիչեան եւ Ռ. Գրիգորեան էֆ. ներու կողմէ ուղղեալ հրաժարագրերն որոց վրայ ոչ ոք յերեսփոխանաց գիտողութիւն մը ըրաւ:

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ.— Սահմանադրութեան վերաքննութեան նկատմամբ տասն եւ եօթն երեսփոխանաց կողմէ գրաւոր առաջարկութիւն մը ներկայացած է, զոր ահաւասիկ կը հազորդեմ ժողովոյն:

Ամենապատիւ Սրբազան Հայր
Նախագահ Ազգ. Երեսփ. Ժողովոյ

Եթէ երբէք ազգային վարչական գործոց ուղղութեան ամենակարեւոր եւ անհրաժեշտ պէտք մը կայ, այն ալ Սահմանադրութեան վերաքննութիւնն ընդգլոյթ աւարտելն է, եւ թէպէտ Սահմանադրութեան վերաքննութիւնն՝ նոյն իսկ Երեսփոխանական պատկառելի ժողո-

վրդ իր որոշմամբն իր մէջ ընել ձեւնարկեց, եւ սակայն բազմամասնակեայ փորձն ցուցուց որ եթէ ոչ անկարելի՛ գէթ կարի դժուար է Սահմանադրութեան վերաքննութիւնն Երեսփոխանական ժողովոյ մէջ ՚ի գլուխ հանել, որուն համար ստորագրեալ երեսփոխանքս կառաջարկեմք որ վերաքննութեան գործն յանձնաժողովոյ մը յանձնուի, Սահմանադրութեան վերաքննութիւնն ժամանակ յառաջ ՚ի գլուխ հանելու համար:

23 օգոստոս 1872

Ի Կալաթա

(Սորոս-Քրոն-Քիւն-Է)

Հմայեակ Վ. Այազմալեան, Մ. Վ. Իզմիրլեան, Ղ. Եւոնդ Վ. Փիրղալէմեան, Ասափայ Հ. Իկիտպաշեան, Մ. Յակոբ Սարգիսեան, Եսայի Մ. Անուխեան, Մ. Յարութիւն Փափազեան, Քեւրովրէ Աղեքսանդրեան, Մ. Մամիկոնեան, Տէլէմաք, Մ. Սիոս Սահակեան, Յովհ, Յովակիմեան, Յ. Ճիւլաճեան, Բարթող Քիւքճիպաշեան, Կ. Ս. Իւթիւճեան, Ա. Ա. Էլմասեան:

Հիմայ որ ժողովը վերահասու եղաւ սոյն առաջարկութեան, Դիւանը յառաջիկայ նիստին օրուան կարգը կանցնէ զայն:

ՆԱԽԱԳԱՀ ՍՐԲԱԶԱՆ.— Արդէն Սահմանադրութեան վերաքննութիւնը խնդրոց կարգին մէջն էր, սակայն նոր ՚ի նորոց այնքան խընդիրներ մէջ բերուեցան, վերաքննութեան այնքան ընդունայն փորձեր եղան որ Սահմանադրութիւնը իրեն յարժար տեղ չգտնելով՝ ուր ուրեմն մեր ատենանէն փախաւ:

Այս ժողովը՝ զոր Հայոց ազգը կազմեր է, ամեն բանէ առաջ Սահմանադրութեան կը կարօտի, ուստի վերաքննութեան խնդիրն պէտք է որ ժողովոյ բոլոր ուշը գրաւէ, եւ ամեն խընդրէ առաջ անցնի: Եւ ստուգիւ ընդհ. ժողովն ալ այս համոզումն ունէր ՚ի սկզբան, եւ ուրիշ ամեն խնդիր իբր՝ երկրորդական կը նկատէր, բայց այն օրէն հեատ յիսուն նիստեր տեղի ունեցան, եւ այս վերաքննութեան գործը ուր որ էր՝ հոն կը մնայ տակաւին: Ժամանակ մը ուղեցինք վերաքննութիւնը յատենի ընդհ. ժողովոյ կատարել. փորձը չուշացաւ հաստատել որ այս անկարելի է եւ երեւակայական, ուստի առանց վարանելու եւ ամաչելու վերաքննութեան գործը ՚ի բաց հանկնք այս ատենանէն եւ գործնական եւ հնարաւ որ միջոցն ընտրենք զայն:

Ի յանդ հանելու համար: Ուրեմն տասնեւեօթն երեսփոխանաց առաջարկութիւնն խնդրոց կարգին նորէն զնել աւելորդ է, հարկ է անմիջապէս խընդիրն ուշադրութեան առնուի, եւ ինչպէս Սահմանադրութիւնը կը տրամադրէ, յանձնաժողով մը կարգել եւ վերաքննութիւնը անոր յանձնել: Քանի արդի տարտամ ընթացքը չարունակէ, Ազգային Վարչութիւնը չպիտի կրնայ իւր ընթացից որոշ ուղղութիւն մը տալ եւ գործել, եւ չը պիտի վերջ գտնեն այն այլ եւ այլ մեկնութիւններն որոնք մերթ այս, մերթ այն խընդրոցն մէջ օրինաց նկատմամբ տեղի կուենան: Ես իսկ, կը յիշէ՛ք, որ երբեմն կրտսմ թէ օրինաց չըջանակէն դուրս պիտի ելնեմ, երբ հարկը ստիպէ, եւ այս խօսքս իրաց արդի վիճակին մէջ ոչ ոք կրնայ մեղադրել:

Վերջապէս ամեն պարագայ ընդհ. ժողովը կը հարկադրէ որ Սահմանադրութեան վերաքննութիւնը կատարելու գործնական եղանակըն ընտրէ եւ օրինաց անխոտոր շաւիղը հորդէ: ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ.— Ուրեմն, Սրբազան Հայր, կուզէք որ ընդհ. ժողովն նախապէս Սահմանադրութեան վերաքննութեան խնդիրն ձեռք առնու:

ՆԱԽԱԳԱՀ ՍՐԲԱԶԱՆ.— Այո՛, եւ երեսփոխան էֆ. ները կրնան այս մասին իրենց գիտողութիւնն ընել:

ՊԵՒԵԱՆ Թ. ԷՖ.— Որովհետեւ հրատարակեալ խնդրոց կարգին մէջ տասն եւ եօթն երեսփոխանաց առաջարկութիւնը չ'կար նշանակուած, այսօր նկատողութեան չկրնար առնուիլ այն, այլ միմիայն խնդրոց կարգը կանցնի: Իսկ եթէ ժողովը իմ կարծիքս ուղէ գիտնալ այդ առաջարկութեան մասին, կանխաւ համամտութիւնը կը յայտնեմ, այլ սակայն կը կրկնեմ թէ այսօր ժամանակը չէ այդ խնդիրը յուղելու:

ՔԻԻՐՔՅԻՊԱՇԵԱՆ Բ. ԷՖ.— Միւսնոյն կարծիքն ունիմ:

ԷՆՔԱՆՔՅԵԱՆ Տ. ԷՖ.— (Գրոս) Ես մէկ հարցում մ'ունիմ Դիւանին, այն է թէ ինչո՞ւ համար ընդհ. ժողովոյ գումարումը այսչափ ուշի թողուեցաւ, միթէ արգելիչ պատճառ մը կար, եթէ ոչ Դիւանը ըստ իւր քմաց ըրաւ այսպէս, մէկ կողմանէ կը տեսնեմ ժողովոյ ներկայացուած խնդիրներուն տրուած կարեւորութիւնը իբր կենսական խնդիրներ, միւս կողմանէ Դիւանին անտարբերութիւնը, իմ խիղճս հանգարտ չըլլար եթէ ասօրդէմ չ'ըրողքեմ, Դիւանը պէտք է այս մասին գոհացուցիչ բացատրութիւն մը

տայ Ձի ես այնպէս կը դաւանիմ որ ընդհ. ժողովոյ ներկայացած խնդիրներն բոլորն ալ ազգային կենաց եւ մահու խնդիրներ են եւ անոնց ժամ առաջ լուծումը ազգին փրկարար միջոցներ են, իսկ ընդհակառակը ուշանայն մահաոթիթ է՝ կը խնդրեմ նաեւ Դիւանէն որ իմացնէ թէ՛ ուրիշ առթիւ ալ այսպէ՛ս պիտի ըլլայ:

ՎԱԽԵՐԱՅՈՒՄՆ ԵՐԵՍՓ. ՆՈՐՈԳ ԸՆՏՐՈՒԹԵԱՆՅ

Երեսփոխանական մէկ քանի նորոգ ընտրութեանց վրայ Գործադիր Յանձնաժողովոյ կողմէ տեղեկագիր մը եկած լինելով՝ Ատենապետ էֆ. ին ժողովոյն ներկայացուց զայն:

Սոյն տեղեկագրին՝ որ յատենի ժողովոյ կարգացուեցաւ, ահաւասիկ պատճէնն,

Ամենապատիւ Սրբազան Հայր

Նախագահ Ազգ. Երեսփ. Ժողովոյ

Իւսկիւտարի Ս. Խաչ թաղի երեսփոխաններէն հրաժարեալ Մաղլըմեան Յովսէփ էֆ. ի տեղ նորոգ ընտրութիւն կատարուելով՝ յիշեալ թաղի 270 ընտրողներէն 92 ին մասնակցութեամբը երկրորդ անգամ համեմատական առաւելութեամբ երեսփոխան վերընտրուած է, Յովսէփ էֆ. Մաղլըմեան 60 քուէով:

Գատըղիւղի հրաժարեալ երկու երեսփոխանաց, Յովհաննէս էֆ. Ղոնչէկիւլեանի եւ Մըկըրտիչ էֆ. Մուրատեանի տեղ նորոգ ընտրութիւն կատարուելով, 400 ի մօտ ընտրողներէն 25 ին մասնակցութեամբը բացարձակ առաւելութեամբ երեսփոխան ընտրուած են, Մելքոն էֆ. Հալաճեան 43 քուէով Պօղոս » Գաբրիէլեան » »

Տարէնտէ, Կիւրին եւ Մանճըլլիս միացեալ վիճակաց հրաժարեալ երեսփոխան Շամլեան Համբարձում էֆ. ին տեղ երեսփոխան ընտրուած է ըստ օրինի, Յովհաննէս էֆ. Թաչճեան Տարէնտէցի:

Գուրուչէ՛մէի հրաժարեալ երեսփոխան Գարբիէլ էֆ. Կիւմիւշճեանի տեղ նորոգ ընտրութիւն կատարուելով, 78 ընտրողներէն 25 ին մասնակցութեամբը երեսփոխան ընտրուած է բացարձակ առաւելութեամբ Աւետիս էֆ. Քօլօլեան 46 քուէով:

Վանայ վիճակին կողմէն երեսփոխան ընտրուած է,

Սիմէօն էֆ. Մազսուտեան :

Սոյն ընտրութիւններն ըստ օրինի կատարուած լինելուն, պատկառելի ժողովոյդ կը ներկայացնեմք 'ի վաւերացումն :

Ի գիտաց Գործ. Յանձնաժողովոյ
23 օգոստ. Ատենապետ
Ս. Պ. Պ. ՓԱՓԱՋԵԱՆ

Սոյն տեղեկագրին ընթերցումէն ետեւ՝ Ատենապետ էֆէնտին հրաւիրեց ժողովը որ կատարուած երեսփոխանական ընտրութեանց նըկատմամբ գիտողութիւն մը՝ եթէ ունի յայտնէ :

ՆԱԽԱԳԱՀ ՍՐԲԱՋԱՆ.— Բարեգէպտոսի մէջ որ ընդհանրապէս քանի մը գիտողութիւն ընեմ մեր արդի ազգային ընտրութեանց վիճակին վրայ, որու հայրն է Գործադիր Յանձնաժողովոյ կողմէ մատուցուած տեղեկագիրն :

Եւ նախ սա կը հարցնեմ երեսփոխանաց թէ Հայոց Սահմանադրութիւնը, իրաւունք եւ պարտիք միմիայն ազգային պաշտօնատարներու վերայ բեռնաւորած է, թէ ոչ ժողովուրդն ալ այդ պարտաւորութեանց եւ իրաւանց ենթակայ է :

ԱՂԱԲԵԿԵԱՆ Մ. ԷՖ.— Անոնք որ յանուն ժողովրդեան սովոր են գործել, թող այդ հարցման պատասխանը տան :

ՆԱԽԱԳԱՀ ՍՐԲԱՋԱՆ.— (Նախաձեռնութիւն) Երբ ազգային պաշտօնատար մը օրինաց շաւղին մէջ սակաւ ինչ զթէ եւ պարտադանց գտնուի, ամենուտ գանդատ ու բողոք կը տեղան անոր դէմ, անոր արարքը, շարժումը կը քննեն, կը դատաւիտեն, ըսել կուզեմ օրինաց բոլոր լուծը պաշտօնէից վրայ ծանրացած է, եւ սակայն ժողովուրդը թեթեւ պարտաւորութիւն մը, բեռ մ'ունի վերան : Կը տեսնես որ թաղի մը մէջ 1000 ընտրողներ քուէարկութեան հրաւեր կրնողունին, եւ անոնցմէ 30 անձինք եւ եթ կը մասնակցին ընտրութեան եւ քուէ կուտան, ուրիշ տեղ մը 200 ընտրողներ կան, սակայն քուէարկութեան պահուն 10 քուէ միայն կուգայ եւ այսպէս 30 կամ 40 անձի քուէով ազգային երեսփոխաններ կընտրուին, եւ ընդհ. ժողովն այս ընտրութիւններն կը վաւերացնէ անբարբառ : Երբ ժողովուրդ իւր իրաւանց եւ պարտուց անտարբեր լինի, Սահմանադրութիւնը մնակալ տառ մը կը դառնայ, եւ ինչ աստիճան անտարբերութիւն որ քուէթղթի վրայ չորս անուն գրէ, կըսես, եւ նա առ ոչինչ կը գրէ այդ հրաւերդ :

Եթէ ի պատասխան առարկուի թէ ժողովուրդը հրաւիրուած է իւր իրաւունքը գործադրելու, եւ ինչ փոյթ մեզ՝ եթէ նա այդ իրաւանց ճանաչուը չունի. կըսեմ, քանի ժողովուրդը այդ ճանաչուը չունի, քանի օրինաց ողին չըմբռնէր, ուրիմն իւր պաշտօնատարներուն համար ալ Սահմանադրութեան պէտք չկայ, եւ արդի վիճակին մէջ կատարուած երեսփոխանական եւ այլ ընտրութիւններն ապօրինաւորութիւններ են եւ չեն կրնար բնաւ համաձայնի Սահմանադրութեան ոգւոյն եւ քուէարկութեան բուն նպատակին հետ :

ՊԵԿԵԱՆ Թ. ԷՖ.— Ժողովուրդը քուէ տալով չէթէ իւր պարտաւորութիւնը, այլ իւր իրաւունքն գործադրած կը լինի, եւ Սրբազան Նախագահն կը կարծէ որ իշխանութիւնը կրնայ ժողովուրդը բռնադատել իւր իրաւունքն գործադրելու :

Իշխանութիւնն, այո՛, կրնայ ժողովրդեան յարդել եւ կատարել տալ իւր պարտաւորութիւնը, սակայն չէ կարող ստիպել զայն որ նաեւ իւր իրաւունքն գործադրէ : Ընտրողը ազատութիւն ունի իւր քուէն տալու կամ ոչ, ոչ ոք կրնայ անոր վրայ բռնանալ : Միւս կողմէ ազգային Սահմանադրութիւնը այդ խնդիրն նախատեսած եւ կնճիողը լուծած է ընտրութեան հեշտին եղանակ մը ցոյց տալով : Եւ ինչ է այդ եղանակը : Ընտրութեան պարագաներու մէջ ընտրող ժողովրդեան քուէարկութեան հրաւեր կարգացուելէ ետեւ՝ որքան անձինք որ այս հրաւերը լսեն եւ քուէ տան, առանց անոնց թիւը խնդրոյ ներքեւ ձգելու, ընտրութիւններն կը կատարուին անվրէպ, եւ այս ընտրութիւններն օրինաւոր են :

Ամեն երկրի մէջ ընտրութիւններն զրեթէ նման օրինակ վիճակ մ'ունին. քուէարկութեան 100 ին 20 ը կը մասնակցի ընդհանրապէս, ինչպէս է այսօր մեր ազգին մէջ : Եւ սակայն այս 20 թիւը կրնայ օր մ'ալ 30 լինիլ, եւ ներկայ պարագաներն իրաւունք չեն տար մեզ հետեցընելու թէ մեր ազգը սահմանադրատէր չէ :

ԻԹԻԻՃԵԱՆ Կ. ԷՖ.— Ես ալ գիտողութիւններ ունիմ այս խնդրոյն վրայ, բայց նախ կուզեմ գիտնալ թէ ի վերջէ որոշում պիտի կրնայ տրուիլ այս մասին, թէ ոչ խօսակցութիւն մը բացուած է, որ առանց հետեւութեան վերջ պիտի գանէ :

ՓԱՓԱՋԵԱՆ Ս. ԷՖ.— Նոր խնդիր մ'է այս, եւ եթէ ժողովը կը հաւանի նկատողութեան առնուլ զայն, պէտք է խնդրոց կարգն անցնի,

եւ այն ատեն ես ալ Սրբազան Պատրիարք Հօր գիտողութեան պիտի պատասխանեմ :

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ.— Արդարեւ Նախագահ Սրբազանին գիտողութիւնը մեծ կշիռ ունի, եւ արժան է այս խնդիրն օրուան կարգն անցնել :

ՆԱԽԱԳԱՀ ՍՐԲԱՋԱՆ.— Երբ ազգային ընտրութեանց վիճակին վրայ իմ գիտողութիւններս յայտնեցի, գիտաւորութիւն չունէի խնդիր մը յարուցանելու, այլ կսպասէի միայն ձայնակիցներ գտնել ինձ. սակայն Պէկեան էֆ. այնպիսի պատասխան մը տուաւ, որ իմ գիտողութեանցս ողին չ'ըջալիէր, որ ժողովրդեան առջեւ բաց դուռ մը կը թողու իւր քուէն տալու կամ չ'տալու, ինչպէս ուզէ : Ամեն անգամ, Պէկեան էֆ. այսպէս իմ խօսքերս ճղճիմ մեկնութիւններով խծրծելու, իմ գիտողութիւններս ճնշելու հետամուտ էք, եւ սակայն Նախագահին գիտողութեանց իրաւացի պատասխան մը չէք տար : Ախոս'ս, ալ այսուհետեւ, Հայոց ժողովուրդը, ազատ եւ ընտրական իրաւունք չգործադրելու, թող 100 ընտրողէն 10 միայն քուէն տայ եւ կամ չտայ բոլորովին, փոյթ չէ : Նախագահը Սահմանադրութիւն կը քարոզէ ժողովրդեան, իսկ երեսփոխանը ընդհակառակը : Հազար ավտոս :

ԻԹԻԻՃԵԱՆ Կ. ԷՖ.— Թերեւս բարոյական պատճառներ կան, որոնք մեր ազգային ընտրութիւնները այս անկման վիճակին մէջ կը դընեն, սակայն կայ ուրիշ զօրաւոր պատճառ մ'ալ եւ այն է՝ քուէարկութեան հրաւիրանաց ձեւին մէջ վերջի օրերս մտած փոփոխութիւնը :

Ասկէ առաջ ընտրութեանց ժամանակ՝ թաղին քարոզչին կողմէ բոլոր ընտրողաց յատուկ քուէնամակներ ուղղուելով քուէարկութեան օրն ու օրինական պայմաններն կը ծանուցուէին. այս ձեւը ոչ միայն ընտրողաց գիւրութիւն կրնամայէր քուէարկութեան մասնակցելու, այլ եւ շատերու վրայ գէթ քաղաքավարական տեսակ մը հարկ կը դնէր թաղին քարոզչին խնդիրն անլսելի չ'թողելով քուէ տալու :

Եւ սակայն երբ հրաժարումներն եւ ընտրութիւններն շատցան, Գործադիր Յանձնաժողովն այս ձեւը փոխեց, եւ սպազարական ծախուց առաջքն առնելու մտք որոշեց քուէարկութեան ազգարարութիւններն լրագրաց միջոցով հրատարակել ալ, (թող որ լրագրապետներն ալ ստակ կը պահանջեն այս հրատարակութեանց համար) եւ այս եղանակը սկսաւ 'ի գործ դրուիլ բաւական ժամանակէ 'ի վեր :

Բայց ըստ որում թաղերու մէջ 100 անձէն 90 ը լրագիր չեն կարդար, բնականաբար անտեղեակ կը մնան կատարուելիք ընտրութեանց, եւ քուէարկութեան չեն կրնար մասնակցիլ : Այս վիճակը դարձանելու համար քանի մը թաղերու մէջ խելացի միջոց մը մտածեր եւ տուններն սկսեր են մարդ զրկել քուէ ուղելու համար, եւ այս միջոցը յաջողեր է : Ըստ իս կամ այս դրութիւնը պէտք է հանրացնել եւ կամ ըստ առաջնոյն յատուկ քուէնամակներով մէն մի ընտրող քուէարկութեան հրաւիրել : Եթէ այսպէս հրաւիրանաց օրինաւոր ձեւ մը 'ի գործ դրուի, այն ատեն պիտի տեսնուի որ հասարակութիւնը կարծուածին չափ անտարբեր չէ իւր ընտրական իրաւանց մասին, հետեւաբար քուէարկութիւնն ալ պիտի ազատի իւր անկման վիճակէն :

Եւ ստուգիւ ինչպէս Սրբազան Նախագահը գիտել տուաւ ժողովոյն, 10, 20 քուէով ընտրութիւններ կատարել, չատ վիտասակար հետեւութիւններ կրնայ ունենալ, եւ հարկ է ընտրութեանց այս վիճակին դարձան մը բերել :

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ.— Նախագահ Սրբազան Հօր գիտողութիւններն իրաւացի կը թուին ինձ եւ նկատողութեան արժանի : Եւ սակայն ժողովոյն կը մնայ որոշել թէ յարուցեալ խնդիրն օրուան կարգն անցնիլ հարկ է թէ ոչ :

ԽՕՃԱՍՍԱՐԵԱՆ Օ. ԷՖ.— Այս խնդրոյն մէջ զբաւոր առաջարկութիւն մը եղած չէ որ կարելի լինի օրուան կարգն անցնիլ :

Քանի մը երեսփոխանք հարկ չեն տեսներ յարուցեալ խնդիրն օրուան կարգն անցնել : Նախագահ Սրբազանը ժամանակի կորուստ չը պատճառելու համար ետ կ'առնու իւր իւր (կամ) առաջարկութիւնը, հետեւապէս խնդիրը կը վերջանայ :

ՎԱԻԵՐԱՅՈՒՄՆ ԱՏԵՆԱԳՐՈՒԹԵԱՆՑ

Ատենապետ էֆէնտին յայտնելով թէ ժողովոյ 39, 40, 41, 42, 43, 46 եւ 48 նիստերու ատենագրութիւնները հրատարակուած եւ երեսփոխանաց հաղորդուած են արդէն, կը հրաւիրէ ժողովն որ անոնց վրայ կարգաւ իւր գիտողութիւններն ընէ :

ԻԹԻԻՃԵԱՆ Է. ԷՖ.— Այդ ատենագրութիւն-

ներն ամբողջ ստացած չեմ դեռ, ուստի եւ անկարելի է ինձ դիտողութիւն ընել :

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ.— Միայն 44, 45, 47 եւ վերջին 49դ նիստերու ատենագրութիւններն դեռ չ'իւրոյս ելած չեն, իսկ միւսներն՝ զորս յիշեցի մի առ մի, հրատարակուած են եւ երեսօթխանաց արդէն հաղորդուած :

ԻՓԷԿՃԵԱՆ Է. ԷՖ.— Նախ՝ ես այդ ատենագրութիւններն ալ դեռ ամբողջ ստացած չեմ, երկրորդ՝ կը հարցնեմ թէ ինչո՞ւ նիստերու կարգը չէ պահուելու եւ 44, 45 եւ 47 նիստերու ատենագրութիւններն դեռ չ'հրատարակուած 46 եւ 48դ. նիստերու ատենագրութիւններն հրատարակուելու են :

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ.— Կը յիշեցնեմ որ ժողովոյ Գիւանը դեռ նոր կազմուած է, եւ բնականաբար անտեղեակ կը գտնուի այդ գործողութեան. միանգամայն կառաջարկեմ որ իւրաքանչիւր նիստի ատենագրութիւն յաջորդ նիստին կարդացուելէ ետեւ հրատարակուի :

ԽՕՃԱՍԱՐԵԱՆ Օ. ԷՖ.— Օրուան կարգին մէջ ատենագրութեանց վաւերացման խնդիրը նշանակուած չըլլալուն՝ հարկ է զայն ՚ի բաց թողուլ, եւ անցնիլ ծանուցեալ խնդրոց, որոց առաջինն է Քաղ. ժողովոյ 4 անդամոց հրաժեշտի խնդիրն :

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ.— Ձեմ կարծեր որ ատենագրութեանց վաւերացումն ալ իբր խնդիր ամեն անգամ յանուանէ օրուան կարգին մէջ նշանակել հարկ լինի. վասն զի ատենական ներքին գործողութիւն մ'է այն, որ ամեն նիստի տեղի կուսնայ ատենը բացուելէն վերջը :

ԽՕՃԱՍԱՐԵԱՆ Օ. ԷՖ.— Բայց երբ այսպէս բաղձաթիւ նիստեր տեղի ունենալէ ետեւ դիպուած ատենագրութիւններ միահաղոյն ժողովոյ դիտողութեան ու վաւերացման ենթարկուին, հարկ է որ խնդրոց կարգին մէջ նշանակուած լինին կանխաւ, որպէս զի երեսօթխանք իրենց դիտողութիւններն նախապարտաւորաբար :

Բայց հիմայ ի՞նչ կընէ Գիւանը, տեսարակ մը կուտայ մեր ձեռքը, եւ կը պահանջէ որ օգոստոս ամսոյ մէջ յիշենք մի առ մի, ինչ որ մարտի մէջ խօսած ենք հոս :

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ.— Վերստին կառաջարկեմ որ իւրաքանչիւր նիստի ատենագրութիւն յաջորդ նիստին ներկայանայ, կարդացուի եւ այնուհետեւ տպագրութեամբ ՚ի լոյս ելնէ : Ըստ իս չը վիճակութեանց առաջըն առնելու լաւագոյն մի-

ջոցն այս է, զոր ուրիշ ազգաց ժողովներ կը գործադրեն արդէն :

ՓԱՓԱՋԵԱՆ Ս. ԷՖ.— Ես կառաջարկեմ որ նախորդ նիստերու անվաւեր թողուած բոլոր ատենագրութիւններն ամբողջապէս ՚ի լոյս ելնեն, եւ այնուհետեւ դիտողութեան ու վաւերացման ենթարկուին :

ՂԱՋԱՐՈՍԵԱՆ Ք. ԷՖ.— Կը սնդեմ որ 46 եւ 48դ. նիստերու տպագրեալ ատենագրութեանց թղթերուն վրայ թուանիշ նշանակուած չէ : Ձը գիտեմ թէ ինչո՞ւ ընդհ. ժողովոյ ատենագրութիւններն՝ որոնք առ յայտն ազգային պատմութեան նիւթ պիտի մատակարարեն, այսպէս պակասաւոր վիճակի մէջ ՚ի լոյս կելնեն : Եթէ նախորդ մէկ քանի ատենագրութեանց չ'տպագրուին է պատճառ որ յաջորդներն այսպէս թուանիշ չեն կրեր, ինչո՞ւ ուրեմն այդ ատենագրութիւններն անտիպ թողուցան :

ՄԷՐԵԷՄ-ԳՈՒԼԻ Յ. ԷՖ.— Ես իբր նախորդ Գիւանի անդամ, Ղաղարոսեան էֆ. ի հարցման պատասխան ունիմ տալու, երբ ժողովը որոշէ զայն խնդրոյ ներքեւ ձգել :

Ժողովը կորոշէ ատենագրութեանց քննութիւնն ու վաւերացումն ուրիշ նիստի թողուլ, հետեւապէս Ատենապետ էֆէնտին կանցնի օրուան կարգին :

ՀՐԱԺԱՐՈՒՄՆ 4 ԱՆԳԱՄՈՅ ՔԱՂ. ԺՈՂՈՎՈՅ

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ.— Նորընտիր Քաղ. ժողովոյ անդամներէն չորսը, որք են,

Ապրօ էֆ. Ազարէկեան Ս. էֆ. Յակոբեան Մ. էֆ. Մէրեւէմ-դուլի Յ. »

Իրենց պաշտօնէն հրաժեշտ մատուցած են այլ եւ այլ պատճառներ մէջ բերելով : Անոնց հրաժարագրերն հաղորդուած են Գիւանին եւ ժողովոյն պիտի ներկայանան հիմայ. սակայն չգիտեմ թէ ինչո՞ւ Քաղ. ժողովն այս հրաժարմանց մասին իւր կողմէ տեղեկագիր մը բերած չէ :

ՓԱՓԱՋԵԱՆ Ս. ԷՖ.— (Ատենադպիր Քաղ. ժողովոյ) Այդպիսի տեղեկագիր մը բերելու հարկ չկար. վասն զի Քաղ. ժողովոյ անդամներն ընդհ. ժողովէն ընտրեալ էին, եւ բնականաբար հրաժարականներ երբ տեղի ունենային ընդհ. ժողովոյ պիտի ներկայանային :

ուղղակի, ինչպէս եղած է այս պարագայիս մէջ : Քաղ. ժողովոյ այս յայտարարութեան վրայ Ատենադպիր էֆէնտին չորս ժողովականաց հրաժարագրերը կընթեռնու, որոց ահաւասիկ պատճէնները :

Առ Ամեն. Ս. Պատրիարք Հայրն

Ձեր սիրալիր հրաւիրանաց նամակը այս վայրկենիս ձեռքս հասաւ, ահա կը ներկայացնեմ իմ խորին շնորհակալիքս հրաժարականովս հանդերձ. իմ ներքին համոզմանցս հակառակ պաշտօն վարելը անհնարին է ինձ եւ անկարելի :

20 յուլիս 1872 ԱՊՐՕ

Ամենապատիւ Սրբազան Հայր

Ազգային Քաղ. ժողովոյ անդամակցութենէն կը հրաժարիմ, վասն զի առ այժմ զբաղմունքս չի ներէր :

27 յուլիս 1872 Մնամ Ձեր ն. Ծ. ՍԱՐԳԻՍ ԱՂԱՐԷԿԵԱՆ

Ամենապատիւ Սրբազան Հայր

Ի պատասխան նախորդ հրաժարագրիս՝ Ձեր Սրբազնութեան 15 յուլիս թուագրեալ հրաւիրագիրը երէկ երեկոյ ստանալով փութամ վերստին իմ շնորհակալութիւններս մեծ. երեսփոխանաց մատուցանել եւ միանգամայն յայտնել որ ներկայիս ունեցած իմ ծանր զբաղմունքներս նոյն պաշտօնը վարելու երբէք չ'ներելուն խնդրեմ սոյն հրաժարագիրս ընդունիլք :

48 յուլիս 1872 Որով մնամ Ձերդ Սրբազնութեան ամենախոնարհ ծառայ Մ. ՅԱԿՈԲԵԱՆ

Ամենապատիւ Սրբազան Պատրիարք Հայր Նախագահ Ազգ. Ընդհ. ժողովոյ

Ինչ սպասուած ազգային որ եւ է ծառայութիւն սիրով ստանձնել պարտ կը համարիմ, քանի որ այնու կարելի լինի ինձ ամենասիրելի ազգիս իրապէս օգտակար հանդիսանալ :

Այս սկզբան հետեւութեամբ՝ ներեցէք, Սրբազան Հայր, որ հրաժեշտ տամ Քաղաքական ժողովականութեան պաշտօնէն, վասն զի ներկայ դանազան պարագաներ բացարձակ խոչընդոտ են ինձ յիշեալ պաշտօնավարութեամբ ազգիս օգուտ մատուցանելու :

Կաղաչեմ, Ամեն. Հայր, հաճեցէ՛ք մատուցանել շնորհապարտ զղացմանցս հաւատարմութեամբ իմանական պատկառելի ժողովոյն որ իւր ընտրութեամբ բարձր վստահութեան պատուալիր ցոյց մը տալ կը ըարեհաճի առ իս : 2 օգոստ. 1872 Մնամ ակնածական յարգանք Յ. Հ. ՄԷՐԵԷՄ-ԳՈՒԼԻ

Այս հրաժարագրերուն ընթերցումէն ետեւ՝ Ատենապետ էֆէնտին կը հարցնէ Քաղ. ժողովոյ թէ ինք ՚ի պաշտօնէ որ եւ է դիտողութիւն ունի՞ ընելու, եւ ֆախադեան էֆ. էն բացատրական պատասխան ընդունելէ ետեւ՝ երեսփոխանաց հրաւեր կ'կարդայ այս հրաժարմանց խնդրոյն վրայ իրենց կարծիքն յայտնելու :

ՊԷԿԵԱՆ Թ. ԷՖ.— Քաղ. ժողովոյ հրաժարեայ անդամներէն երեքը իրենց անձնական ըզբաղումներն պատճառ ցոյց կուտան եւ այս պատճառը խիստ պարզ է եւ յայտնի, իսկ Ապրօ էֆ. կը հրաժարի յայտնելով որ իւր ներքին համոզմանց հակառակ չ'կրնար ազգային պաշտօն վարել : Այս յայտարարութիւնը ծանր նշանակութիւն ունի, եւ հարկ է այդ մասին Ապրօ էֆ. էն բացատրութիւն ուղել, որպէս զի ժողովը իմանայ անոր հրաժեշտին շարժառիթը եւ ըստ այնմ կամ չընդունի զայն, կամ գէթ գիտնայ թէ զո՞վ պէտք է ընտրել անոր տեղ որ կարող լինի այդ պաշտօնը ստանձնել :

ԻՓԷԿՃԵԱՆ Է. ԷՖ.— Ես կառաջարկեմ հրաժարելոց տեղ ուրիշներն ընտրել, իսկ երբ Ապրօ էֆ. ներկայ լինի ժողովոյն այն ատեն կրնայ հարցուիլ անոր իւր հրաժեշտին շարժառիթը, այդ ուրիշ խնդիր է :

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ.— Բայց միթէ հրաժարող ժողովականը իւր հրաժեշտին համար դատաստանի՞ ենթարկել կուզենք : Ի՞նչ իրաւունք ունինք անոր վրայ բռնանալու եւ հարցաքննութիւններ ընելու :

ՆԱԽԱԳԱՀ Ս.— Պէկեա՛ն էֆ. պահ մը առաջ ձեր քարոզած սկզբունքը ահաւասիկ ձեզի դէմ կը դառնայ հիմայ, եւ թոյլ չտար ձեզ որ ժողովականի մը հրաժեշտին պատճառն հարցաքննելու ելնէք :

Եւ ի՞նչ իրաւունք ունիք դուք Ապրօ էֆ. ին այս տեսակ հարցումներ ուղղելու, դո՞ւք որ աղատութեան քարոզ էք, եւ կըսէք թէ ժողովուրդը երբ քուէ չտայ, իրաւունք չունինք պատճառն հարցնելու եւ իմանալու :

չորս անդամոց ընտրութեան առթիւ : Նախ կոստան է ֆ. ին՝ որ ֆաղ. ժողովն անկերպարան վիճակի մը մէջ կենթադրէ, կը պատասխանեմ թէ ֆաղ. ժողովն թէ՛ւ իւր չորս անդամներն հրաժարեալ, կազմուած իւր նիստերը կը շարունակէ, եւ Ընդհ. ժողովոյ կողմէ արդէն ընդունուած եւ ի գործ դրուած դրութեան հետեւելով իւր ներկայ անդամոց թուոյն մեծագոյն մասովը ատենանք կը բանայ եւ Վարչական գործերը կը սնորհնէ :

Երկրորդ կը յայտարարեմ որ ֆաղ. ժողովն առաջադրած է ազգային Սահմանադրութեան այն ամեն յօդուածները՝ որոնք վերաքննութեան բովէն անցած չեն եւ նոյնը կը մնան, նոյնութեամբ՝ եւ այն մասերը՝ որոնք վերաքննուելով փոփոխութիւն կրած են՝ եղած սրբազրութեանց համաձայն գործադրել . իսկ երբ ֆաղ. ժողովը Սահմանադրութեան գործադրութեան մէջ դժուարութեանց պատահի, եւ անոր այս կամ այն տրամադրութեան փոփոխութիւնը հարկաւոր երեւի իրեն, այն ատեն Ընդհ. ժողովոյ պիտի դիմէ եւ յարուցեալ դժուարութեանց բարձու մը խնդրէ : Այս տրամադրութեամբ ֆաղ. ժողովն երբէք չկրնար որ եւ է փոփոխութիւն առաջարկել ֆաղ. ժողովոյ անդամոց թուոյն եւ ընտրութեան եղանակին վրայ, քանի որ անոր կազմութեան խնդիրն Ընդհ. ժողովոյ չորս նիստերը գրաւելով իւր լուծումն ընդունած եւ որոշուած է որ ֆաղ. ժողովն Ընդհ. նստիւն ընտրուի եւ 14 անդամէ բաղկանայ . հետեւապէս աւելորդ է ֆաղ. ժողովոյ հարցնել թէ 10 անդամով կուզէ՞ գործել : Այս ընտրութեան պարագային մէջ կարծեմ Ընդհ. ժողովն ուրիշ բան մը չունի ընելիք, այլ միայն Յանձնաժողով մը կարգել ընտրելեաց ցանկը պատրաստելու պաշտօնով, եւ որոշել թէ քուէարկութիւնը յատենի Ընդհ. ժողովոյ պիտի կատարուի, թէ ի վերջէ երեսփոխանները քուէարկութեան պիտի հրաւիրուին առանձին նամակներով :

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ.— Ընտրութիւնը ի՞նչպէս պիտի կատարուի ուրեմն, զայդ ըսէք որոշակի :

ՊԵՎԵԱՆ Թ. ԷՖ.— Յայտնի է, այդ մասին օրէնք կայ դրուած, ըստ այնմ Յանձնաժողով մը պէտք է կարգել . ուստի որ եւ է առաջարկութիւն քուէի չ'գրուիր :

ՂԱԶԱՐՈՍԵԱՆ Ք. ԷՖ.— Ճշմարիտ է, օրէնքը պէտք է գործադրել :

ՆԱԽԱԳԱՀ Ս.— Օրէնքը գործադրեցէք :

Տ. ՀՄԱՅԵԱԿ ՎՐԴ.— (Խօսքը առ Ատենապետ տըն ուղղելով) Ինչո՞ւ չէք որոշեր :

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ.— Չեմ հասկնար ի՞նչ ըսել կուզէք, կոստան եւ Եուսուֆեան է ֆ. ներն առաջարկութիւն մ'ըրին, ըսէ՞ք զայն քուէի պիտի դնե՞ք թէ ոչ :

(Քուէ չ'ը երեւոյնէն չ'ը չ'ը)

ՊԵՎԵԱՆ Թ. ԷՖ.— Եթէ Եուսուֆեան է ֆ. ֆաղ. ժողովոյ չորս անդամոց ընտրութեան առթիւ նոր առաջարկութիւն մը կը բերէ, ըսել է այս արդէն հաստատեալ օրինաց վերաքննութիւնը կուզէ, խնդրոց կարգն անցնելու է :

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ.— Կոստան է ֆ. առաջարկութիւն մը ըրաւ եւ ես զայն երկրորդեցի . ամեն երեսփոխան իրաւունք ունի իւր կարծիքը յայտնելու . ես իմ կարծիքս կը դռնեմ խընդիրը չ'ըրբըքելու համար, բայց կը բողոքեմ Պէկեան եւ Օզսէն է ֆ. ներու ղէմ, որոնք թոյլ չ'տուին Ատենապետ է ֆէնտիին ժողովոյ կամքը հասկնալ այն առաջարկութեան վրայ :

Եթէ այս առաջարկութիւնն համաձայնեմ չ'ունէր եւ մենք միայնակ էինք, ուրեմն ինչո՞ւ չուզեցին որ ժողովոյն կամքը հարցուի : Անոր կամաց առջեւ մենք գիտեմք խոնարհիլ, բայց երկու երեսփոխանաց բացարձակ կամացը առջեւ ոչ երբէք :

ԿՈՍՏԱՆ Հ. ԷՖ.— Մանաւանդ որ մեր առաջարկութիւնը օրինաց չէր հակառակէր, Յանձնաժողովը պիտի գրուէր սա տարբերութեամբ որ ֆաղ. ժողովոյ անդամներէն պիտի կազմուէր :

Այս պահուս Ատենապետ է ֆէնտիին ժողովոյն կը յիշեցնէ թէ Գործադիր Յանձնաժողովոյ կողմէ ծանուցուած երեսփոխանական ընտրութիւններն անվաւեր մնացած են, եւ զանոնք մի առ մի քուէի կը դնէ, հետեւաբար ժողովն Իւսկիւտարի Ս. Խաչ եկեղեցոյ թաղի, Գաթը գիւղի, Տարէնտէի, Կիւրիի, եւ Մանճըլթի միացեալ վիճակաց, Քուրուչէշմէի եւ Վանայ երեսփոխանական ընտրութիւններն կընդունի եւ կը հաստատէ :

Յետոյ Ատենապետ է ֆէնտի ֆաղ. ժողովոյ չորս անդամոց ընտրութեան խնդրոյն զառնալով կը յայտարարէ թէ Գիւանն իւր կողմէ ընտրելեաց եռապատիկ ցանկ մը պատրաստելու համար Յանձնաժողով մը պիտի կարգէ, եւ

այդ ցանկը պատրաստել տալով ժողովոյն ներկայացնէ յաջորդ նիստին :

ՂԱԶԱՐՈՍԵԱՆ Ք. ԷՖ.— Պէտք է այդ Յանձնաժողովը յատենի Ընդհ. ժողովոյ ընտրուի :

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ.— Եթէ Գիւանն այսօր կազմէ Յանձնաժողովը՝ պիտի ստիպուի ընդհանուր ատենանք . ուստի, ինչպէս ասկէ առաջ եղաւ պէտք է թոյլ տալ Գիւանին՝ որ իւր բոլոր անդամոց գործակցութեամբ կատարէ այդ ընտրութիւնը :

ՓԱՓԱԶԵԱՆ Ս. ԷՖ.— Շատ անգամ Յանձնաժողովներ կազմուած են Գիւանին ընտրութեամբ, բայց չէ թէ դուրսը՝ ինչպէս եղաւ անցեալ անգամ, օրը տարածմամբ լինելուն համար . այլ յատենի Ընդհ. ժողովոյ :

Այս տեսակ պարագայի մէջ սովորութիւնն այն է որ Գիւանը Յանձնաժողովոյ անդամակցելու համար քանի մը անձանց անուններ կը յիշէ . ժողովն ալ առժամայն կընդունի ընտրութիւնը եւ կը վերջանայ խնդիրը : Այս սովորութեան շեղելու եւ դժուարութիւններ յարուցանելու հարկ չկայ հիմա :

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ.— Այսպէս յանկարծուտ ընտրութիւն կատարել չըլլար, Գիւանը ինքնին խորհելու է :

ՓԱՓԱԶԵԱՆ Ս. ԷՖ.— Ո՛չ, Յանձնաժողովները ընտրութիւնն ըսած եղանակաւս կը կատարուի :

ՊԵՎԵԱՆ Թ. ԷՖ.— Յանձնաժողով դնելու իրաւունքը ժողովին կը վերաբերի եւ ոչ թէ Գիւանին, ի՞նչ է ուրեմն պատճառ որ Գիւանին տրուեցաւ այդ իրաւունքը : Այս տեսակ պզտի խնդիրներու մէջ ինչպէս սահմանադրական ժողովներու մէջ ալ այնպէս է, Ատենապետին արտօնութիւն կը արուի որ Յանձնաժողովոյ անդամներն անուանէ, եւ որ անմիջական կերպով կանուանէ . հետեւապէս Գիւանին բոլոր անդամոց հարկ չկայ այդ գործին մասնակցելու, վասն զի ինչպէս ըսի, բուն իրաւունքն Ընդհ. ժողովինն է եւ Ատենապետը արտօնութիւն առած է զայն գործադրելու :

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ.— Երբ պահ մ'առաջ առաջարկեցի որ ընտրելեաց ցանկը պատրաստելու գործը ֆաղ. ժողովին յանձնուի, զիմադրեցին եւ ուղեցին որ Յանձնաժողով մը դրուի, եւ անոր անդամոց ընտրութիւնը Գիւանն ընէ . հիմա որ Գիւանը խորհիլ կուզէ Յանձնաժողովոյ անդամներն ընտրելու համար, կը զիմադ-

րեն նորէն եւ կուզեն որ Ատենապետն անուանէ անոր անդամները :

Եթէ Ատենապետը պիտի ընէ այդ ընտրութիւնն, ուրեմն Գիւանը իրաւունք մը չունի եւ այն ատեն պէտք է բարձր փոխել . իսկ եթէ Գիւանը պիտի ընէ, իւր անդամները միանապէս եւ խորհրդակցելու են : Արն ալ լինի փոյթ չէ ինձ, բայց կուզեմ իմանալ ժողովոյ օրոշումը :

(Քուէ չ'ը նորոշուէրէ) Գիւանը թող կատարէ ընտրութիւնն իւր ներկայ անդամներով :

Հետեւապէս Գիւանը Յանձնաժողովոյ անդամ կանուանէ,

Քարակէօզեան	Կարապետ	է ֆ .
Մանուկեան	Սենեքերիս	»
Հալաճեան	Բարսեղ	»
Փախաղեան	Ստեփան	»
Քիւրքճիպաշեան	Բարթոլ	»
Ղաղարոսեան	Քրիստոսաուր	»
Պոյաճեան	Յովհաննէս	»

Սակայն Փախաղեան, Ղաղարոսեան եւ Հալաճեան է ֆ. ները կը հրաժարին :

Տ. ՀՄԱՅԵԱԿ ՎՐԴ.— Եկեղեցական անդամ ալ պէտք է այդ Յանձնաժողովոյն մէջ :

ՊԵՎԵԱՆ Թ. ԷՖ.— Ուրիշ անգամ երբ միեւնոյն կէտին վրայ խնդիր յուղուեցաւ, ըսուեցաւ որ մեր մէջ աշխարհականի եւ եկեղեցականի խտր չկայ, եւ թէ Յանձնաժողովը կըրնայ գլխովին այս կամ այն կարգի անձերէ բաղկանալ, Այս պարագային մէջ թերեւս Գիւանը անուշադրութեամբ Յանձնաժողովոյն աշխարհական անդամներ անուանեց գլխովին, թերեւս ուրիշ առթիւ մ'ալ անդամոց մեծ մասը եկեղեցական լինի : Մեր մէջ քանի որ խտր չկայ, կընդունինք Գիւանին ըրած ընտրութիւնը :

Ժողովը Գիւանին կողմէ ընտրեալ Յանձնաժողովը կընդունի, մերժելով անոր անդամոց ոմանց հրաժեշտը :

ԿՈՆԴԱԿ ՎԵՉ . ԿԱԹՈՒՂԻԿՈՍԻ


ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ.— Արդէն վ. Ե. Կաթուղիկոսին հոնդակը յատենի աստ կարգացուած է, եւ անոր բովանդակութիւնը ժողովոյն ծանօթ :

The first part of the paper is devoted to a general
 consideration of the subject, and to a statement of the
 objects which it has in view. It is then divided into
 three parts, the first of which is devoted to a
 description of the nature and extent of the
 disease, and the second to a description of the
 symptoms which it produces. The third part is
 devoted to a description of the treatment which
 is to be adopted in the various stages of the
 disease, and to a statement of the prognosis
 which may be expected in each case.

The second part of the paper is devoted to a
 description of the nature and extent of the
 disease, and to a statement of the symptoms
 which it produces. It is then divided into
 three parts, the first of which is devoted to a
 description of the nature and extent of the
 disease, and the second to a description of the
 symptoms which it produces. The third part is
 devoted to a description of the treatment which
 is to be adopted in the various stages of the
 disease, and to a statement of the prognosis
 which may be expected in each case.

THE UNIVERSITY OF CHICAGO
 LIBRARY

THE UNIVERSITY OF CHICAGO
 LIBRARY



ԳԻՆ 2 ՂՐՈՒՇ

ՍԵՓԱԿԱՆՈՒԹԻՒՆ ԱԶԳԱՅԻՆ ՍՆՏՈՒԿԻՆ

Կը ծախուի ի Դիւանատան Պատրիարքարանի , և կը գտնուի
Եկեղեցեաց բանկաները :